ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0054 ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղամաս, 62/26, ընդունարան 370-298, քարտուղարություն 370-274, ֆաքս 370-296

№ 4/614 «14» 05 2020 թ.

Ձեր

ԱՁ Անուշ Պետրոսյանին (ՀՎՀՀ 49557658)
ք. Երևան, Արշակույաց 5
էլ. հասցե՝ ga-c@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

Հայտնում ենք Ձեզ, որ ՀՀ ոստիկանության զորքերի և «Անուշ Պետրոսյան» ԱՁ-ի միջև 25.12.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԾՁԲ-20/9/Բ/5/ԿԾ-20» ծածկագրով՝ տպիչ սարքերի լիցքավորման և վերանորոգման ծառայությունների մատուցման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում, «Անուշ Պետրոսյան» ԱՁ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ, հրաժարվել է ապահովել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ծառայության մատուցումը:

Համաձայն Պայմանագրի 2.1.3-րդ կետի՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «ա» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված, եթե մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 7.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության զորքերը 2020թ-ի մայիսի 14-ին միակողմանի լուծում է ՀՀ

ոստիկանության զորքերի և «Անուշ Պետրոսյան» ԱՁ-ի միջև 25.12.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈՋ ԳՀԾՁԲ-20/9/Բ/5/ԿԾ-20» ծածկագրով Պայմանագիրը:

Կատարողի կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները (տուժանքի մասին համաձայնագրեր՝ Հավելված 4.1 և Հավելված 5.1) կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվի «Կոնվերսբանկ» ՓԲ ընկերություն, տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարը՝ 567413.22 ՀՀ դրամ գումարը, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

«Անուշ Պետրոսյան» ԱՁ-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու են լիազոր պետական մարմին:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Գնդապետ ***Վ. Ղազարյան***